

**Նաշվելություն**  
**Բնական գազ սպառողների ներփնային համակարգերի**  
**տեխնիկական սպասարկման գործընթացի ուսումնասիրության**

**1. Ընդհանուր դրույթներ**

Ի կապարումն Նայասփանի Նանրապելության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի փարեկան ծրագրի 30-րդ կետի, Նայասփանի Նանրապելության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահի սեպտեմբերի 22-ի №172-ՌՆ հրամանով հանձնաժողովի աշխատակազմի լիցենզավորված գործունեության մոնիթորինգի վարչության և սպառողների հետ կապերի բաժնի աշխատակիցներից ստեղծվել է աշխատանքային խումբ՝ հանրապետությունում բնական գազ սպառողների ներփնային համակարգերի տեխնիկական սպասարկման գործընթացն ուսումնասիրելու համար: Ուսումնասիրություններն իրականացվել են «ՆայՌուսգազարդ» ՓԲԸ-ի և հասարակական կազմակերպությունների հետ համաձայնեցված «Բնական գազ սպառողների ներփնային համակարգերի տեխնիկական սպասարկման գործընթացի ուսումնասիրության ծրագրով» և վերը նշված հրամանով հաստատված ժամանակացույցով: (հավելվածներ 1.1 և 1.2)

Ուսումնասիրություններին մասնակցել են «Նասարակական պաշտպանների միություն» և «Բնակ-կոմունալ ոլորտի աշխատողների միություն» հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները:

Ուսումնասիրության հիմնական ուղղություններն հետևյալն են.

ա) գազասպառման ներփնային համակարգերի սպասարկումն ապահովելու համար անհրաժեշտ փաստաթղթերի և դրանց կիրարկումն ապահովող հրամանների և հրահանգների առկայությունը,

բ) բնական գազ սպառողների ներփնային համակարգերի տեխնիկական սպասարկման գործընթացի կազմակերպումը և ԳՄՕԿ-ով սահմանված պահանջների կապարումը տեխնիկական սպասարկման աշխատանքների ընթացքում:

Ուսումնասիրություններն իրականացվել են «ՆայՌուսգազարդ» ՓԲԸ-ի վարչությունում և մասնաճյուղերում: Նասարակական կազմակերպությունների և ընկերության ներկայացուցիչների հետ համարեղ, ընտրովի այցելությունների միջոցով ուսումնասիրվեց նաև գազասպառման ներփնային համակարգերի սպասարկման իրականացումը սպառողների մոտ:

## **2. Գազասպառման ներփնային համակարգերի փեխնիկական սպասարկումն ապահովելու համար անհրաժեշտ փաստաթղթերի և դրանց կիրարկումն ապահովող հրամանների և հրահանգների առկայությունը**

Գազասպառման ներփնային համակարգերի փեխնիկական սպասարկման կազմակերպման աշխատանքները ընկերությունը սկսել է 2005թ հունվարին, երբ «Նայֆուսգազարդ» ՓԲԸ-ի գլխավոր փնօրենի հրամանով սրեղծվել է աշխատանքային խումբ, որը պետք է մշակեր անհրաժեշտ փաստաթղթերի և դրանց կիրարկման կարգը: «Նայֆուսգազարդ» ՓԲԸ-ի կողմից մշակվել և հաստատվել են մի շարք փաստաթղթեր, որոնցից փեխնիկական սպասարկման խնդիրներին վերաբերող.

ա) «Բնակելի փների և օբյեկտների գազասպառման կենցաղային համակարգերի փեխնիկական սպասարկում» կազմակերպության սրանդարտը,

բ) «Գազասպառման կենցաղային համակարգի փեխնիկական սպասարկման ժամանակավոր հրահանգ»:

Գազասպառման ներփնային համակարգերի փեխնիկական սպասարկման աշխատանքների կազմակերպմանն են ուղղված նաև մի շարք հրամաններ և հրահանգներ, որոնք տրվել են ընկերության գլխավոր փնօրենի և գլխավոր ճարտարագետի ստորագրությամբ: Մասնավորապես, տրվել են հրամաններ ընկերության մասնաճյուղերում համապատասխան ծառայության պետի հաստիք հաստատելու, անհրաժեշտ քանակության փականագործներով համալրելու, դրանց մասնագիտական ուսուցումը կազմակերպելու վերաբերյալ:

Տեխնիկական սպասարկում իրականացնող փականագործների ուսուցումը իրականացվում է համաձայն ընկերության կողմից հաստատված «Բնակելի փների և օբյեկտների գազասպառման համակարգերի փեխնիկական սպասարկումն իրականացնող անձնակազմի գազի փնօրենությունում անվտանգության, փարրերի փեխնիկական շահագործման կանոնների և աշխատանքի անվտանգության պահանջների ուսուցման ծրագրի»: Նամաձայն այդ ծրագրի 2006 թվականի ընթացքում ուսուցում են անցել փեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի 80 աշխատակիցներ՝ այդ թվում 77 փականագործ:

## **3. Մտրակարարի ընփրությամբ և մրցույթով անցած այլ կազմակերպությունների առկայությունը**

Ուսումնասիրությունների ընթացքում պարզվել է, որ «Նայֆուսգազարդ» ՓԲԸ-ն գազասպառման ներփնային համակարգերի փեխնիկական սպասարկման աշխատանքները ներկայումս իրականացնում է իր անձնակազմի միջոցով: Բացառություն է կազմում «Կենցաղային սպառման համար բնական գազի մատակարարման պայմանագրին» հավելված

«Ներփոխանակման գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման համաձայնագրով» սահմանված աշխատանքներից 1-ին կետի ե) ենթակետով նախատեսված «ծխափայտ ուղիների զննումների և անհրաժեշտության դեպքում մաքրման աշխատանքները»: Այս աշխատանքների կատարումը պայմանագրային հիմունքներով ընկերությունը կազմակերպել է ՆՏ «Նրշեջ անվտանգության մասնագիտացված ծառայություններ» իրավաբանական անձանց միության անդամ թվով 29 ընկերությունների միջոցով, որոնք գրանցված են «ՆայՌուսգազարդ» ՓԲԸ-ում և վերջինիս կողմից ընտրվել են հիմք ընդունելով 2005 թվականի հոկտեմբերի 4-ի ՆՏ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի №139Ա որոշմամբ հաստատված չափորոշիչները:

#### **4. Գազամատակարարման համակարգերի և սարքերի անվտանգ օգտագործման վերաբերյալ բնակիչների պարբերական հրահանգավորումը**

«ՆայՌուսգազարդ» ՓԲԸ-ի կողմից գազամատակարարման համակարգերի և սարքերի անվտանգ օգտագործման վերաբերյալ բնակիչների պարբերական հրահանգավորումը իրականացվում է ներփոխանակման համակարգերի տեխնիկական սպասարկման աշխատանքների ընթացքում, ինչի վերաբերյալ կատարվում է համապատասխան գրանցում: Նշենք նաև, որ կարևորելով գազամատակարարման համակարգերի և սարքերի անվտանգ օգտագործման վերաբերյալ բնակչության իրազեկումը, ընկերությունը բնակելի շենքերի մուտքերում և այլ վայրերում տեղադրել է 3000 վահանակներ «Գազի անվտանգ օգտագործման կանոնների վերաբերյալ»: Սպառողներին են փրամադրվել «Գազի հոսքային ջրափաթեցուցիչների և ջեռուցման սարքերից օգտվելու կանոններ» 420 հազար հուշաթերթիկ: ՆՏ փարածքում գործող «Շանթ», «Եվրոնյուս» ընկերությունների հետ կնքվել են պայմանագրեր հեռուստագովազդի միջոցով բնակչությանը գազամատակարարման համակարգերի և սարքերի անվտանգ օգտագործման կանոնների վերաբերյալ պարբերաբար տեղեկացնելու համար:

#### **5. Մատակարարի կողմից գազասպառման համակարգերի սպասարկման աշխատանքների կազմակերպումը մասնաճյուղերում և իրականացումը սպառողների մոտ**

Նամաձայն ՆՏ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահի 2006 թվականի սեպտեմբերի 22-ի N172-ՆՆ հրամանի, սրբեղծվել է աշխատանքային խումբ, որն սույն թվականի հոկտեմբեր ամսին հանրապետության 5 մարզերում և Երևան քաղաքում ուսումնասիրել է սպառողների մոտ գազասպառման ներփոխանակման համակարգերի փաստացի կատարված սպասարկման աշխատանքների ծավալները և դրանց ձևակերպումը

պայմանագրերում: Այդ ուսումնասիրություններին ներգրավվել են նաև սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները:

Ուսումնասիրությունները անցկացվել են «ՆայՌուսգազարդ» ՓԲԸ-ի Արտաշատի, Մարտունու, Երևանի, Տավուշի, Լոռու և Սյունիքի ԳԳՄ-ներում և նրանց սպասարկման ներքո գտնվող սպառողների մոտ: (հավելված 2)

Նշված մասնաճյուղերում ուսումնասիրվեցին գազասպառման ներփնային համակարգի սպասարկումն ապահովելու նպատակով իրականացված միջոցառումները՝ հասփիքների կազմավորման և աշխատանքների կազմակերպման, սպասարկող անձնակազմի մասնագիտական ուսուցման, նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի և նյութափոխանակական բազայի ստեղծման:

Մասնավորապես ուսումնասիրվել են հետևյալ փաստաթղթերը՝

- մասնաճյուղում ներփնային համակարգերի տեխնիկական սպասարկման ծառայության ստեղծման վերաբերյալ,
- մասնաճյուղի սպասարկող անձնակազմի քանակի վերաբերյալ,
- մասնաճյուղում սպառողների կանչերով կարարվող սպասարկման կազմակերպման վերաբերյալ՝ կարգադրագրերը և դրանց գրանցման մատյանները,
- մասնաճյուղում ներփնային համակարգի տեխնիկական սպասարկման ժամանակացույցերը,
- մասնաճյուղի սպասարկող անձնակազմի (փականագործների) ուսուցման վերաբերյալ,
- «Նրշեջ անվտանգության մասնագիտացված ծառայությաններ» միության անդամ ընկերությունների հետ կնքված պայմանագրերի առկայությունը (ծխախոտ ուղիների կառուցման և սպասարկման վերաբերյալ):

2006 թվականի հոկտեմբեր ամսվա ընթացքում կարարվել է 481 այց «ՆայՌուսգազարդ» ՓԲԸ-ի վերը նշված մասնաճյուղերի կողմից սպասարկվող բաժանորդների բնակարաններ:

Բոլոր այցերն իրականացվել են երեք հոգուց բաղկացած խմբերով՝ մեկական ներկայացուցիչ, հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովից, սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպությունից և ԿՎԿՎՎ ԿՎԿՎՎ սպասարկող մասնաճյուղից:

Կարարված այցերի ընթացքում, ուսումնասիրվել է բաժանորդների ներփնային համակարգի անվտանգ օգտագործման հրահանգավորման և գազասպառման ներփնային համակարգերի տեխնիկական սպասարկումն «ՆայՌուսգազարդ» ՓԲԸ-ի համապատասխան մասնաճյուղի կողմից, մատուցված ծառայության գրանցումները պայմանագրերում, ինչպես նաև ԿՎԿՎՎ բաժանորդի վերաբերյալ՝ հասցեն, անուն ազգանունը, հեռախոսի համարը, մարակարարման պայմանագրի համարը և կնքման ամսաթիվը: Կարարված այցերի

ընթացքում կապարված ուսումնասիրությունների արդյունքները ամփոփ փետրով բերված են «Ամփոփագրում»՝ (Նավելված 2):

## 6. Եզրակացություններ

Աշխատանքային խումբը, ամփոփելով կապարված ուսումնասիրությունները հանգել է հետևյալ եզրակացությունների.

1. Նանրապետությունում դեռևս չի ավարտվել հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2005 թվականի դեկտեմբերի 9-ի N199Ն որոշմամբ հաստատված կենցաղային սպառման համար բնական գազի մատակարարման (Մատակարար-Բաժանորդ(Բնակիչ)) պայմանագրի կնքման գործընթացը: Նոկտեմբերի 1-ի դրությամբ 71164 բնակիչ-բաժանորդների հետ պայմանագրերը վերակնքված չեն:

Ընկերության սպասարկման ոլորտից դուրս են մնացել շուրջ 4862 բաժանորդներ: (հավելված 3)

2. Տեխնիկական սպասարկման ծառայության աշխատակիցների թվաքանակը, ներառյալ պայմանագրային հիմունքներով աշխատող ծխաօդափայտ ուղիների սպասարկումն իրականացնող 120 մասնագետների, կազմել է 548 աշխատակից: Նամաձայն հանձնաժողովի հետ համաձայնեցված մեթոդաբանության՝ 400 000 բաժանորդների պարագայում սպասարկման ծառայության աշխատակիցների թվաքանակը պետք է կազմեր 947 աշխատակից:

3. Աշխատանքային խմբի գնահատմամբ, որի հիմքում դրված են սպասարկման աշխատանքների կատարման կանխատեսումները, մինչև փարեվերջ Երևանի և Մարտունու ԳԳՄ-ներում յուրաքանչյուր սպառողին հնարավոր կլինի սպասարկել առավելագույնը մեկ անգամ (ներկայումս սպառողների սպասարկման ցուցանիշը կազմում է համապարասխանաբար 0,84 և 0,77): Մյուս ԳԳՄ-ների այդ ցուցանիշը փարանվում է 0,98-ից մինչև 1,46-ի սահմանում և, հետևաբար, այդ ուղղությամբ աշխատանքների կատարումը նույնպես բավարար համարել չի կարելի: (Նավելված – 3) Կենցաղային սպառման համար բնական գազի մատակարարման (Մատակարար-Բաժանորդ(Բնակիչ)) պայմանագրի հավելված կազմող ներմային գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման համաձայնագրի 2.2 կետի պահանջը՝ «...Տեխնիկական սպասարկման ծառայությունը մատուցվում է փարին առնվազն երկու անգամ, որոնցից մեկը՝ ջեռուցման ժամանակաշրջանի ընթացքում», ըստ կանխատեսման կիրականացվի միայն Արմավիրի ԳԳՄ-ի բաժանորդների մոտ:

4. Բաժանորդների մոտ կատարված ուսումնասիրություններից պարզվել է, որ 481 բաժանորդից, ըստ վերջիններիս բանավոր հայտարարության, ամբողջությամբ կամ մասնակիորեն սպասարկումն իրականացվել է 452 կամ 93,9% բաժանորդի մոտ: Սակայն, ներմանային համակարգի տեխնիկական սպասարկման համաձայնագրերում սպասարկման աշխատանքների կատարումը փաստող գրառումները՝ հրահանգավորումների, տեխնիկական սպասարկման և ծխաօդափար ուղիների պիտանելիության ստուգումների վերաբերյալ, արված են սպառողների միայն 44,7% -ի մոտ: (հավելված 2)

Նշենք նաև, որ ընկերության մասնաճյուղերի կողմից գազիֆիկացման աշխատանքները իրականացվում են հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 07.02.2006թ. №15Ա և 31.05.2006թ. №98Ա որոշումների և «ՆայՌուսգազարդ» ՓԲԸ գլխավոր տնօրենի կողմից սահմանված «Ժամանակավոր ընթացակարգի» պահանջների խախտումներով՝ այն է ծխաօդափար ուղիների պիտանելիության ակտի փրամադրման և բազմաբնակարան շենքերում դեֆլեկտորների տեղադրման գործնթացը, ինչպես նաև դրանց համար վճարները կանոնակարգված չեն:

## **7. Առաջարկություններ**

Նաշվի առնելով կատարված ուսումնասիրությունների արդյունքները, աշխատանքային խումբը առաջարկում է

«ՆայՌուսգազարդ» ՓԲԸ- ին՝

ա) Ընկերության կողմից հաստատված «Բնակելի տների և օբյեկտների գազասպառման կենցաղային համակարգերի տեխնիկական սպասարկում» կազմակերպության ստանդարտի դրույթները համապատասխանեցնել 2005 թվականի հուլիսի 8-ի ՆՏ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի № 95Ն որոշմամբ հաստատված «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնների» պահանջներին,

բ) Կենցաղային նպատակներով բնական գազ սպառողների հետ պայմանագրերի վերակնքման աշխատանքները ավարտել մինչև սույն թվականի դեկտեմբերի 31-ը,

գ) Կենցաղային նպատակներով բնական գազ սպառողների ներմանային համակարգերի օգտագործման և բնական գազից օգտվելու անվտանգության կանոնների ու պահանջների վերաբերյալ բաժանորդների հրահանգավորումը ավարտել մինչև սույն թվականի դեկտեմբերի 31-ը,

դ) Ներքնային գազասպառման համակարգի փեխնիկական սպասարկման աշխատանքները, որոնք նախատեսված է անկացնել փարին երկու անգամ, որից մեկը ջեռուցման ժամանակաշրջանի ընթացքում (այդ թվում ծխաօդափար ուղիների զննում, պիտանելիության ստուգում), ավարտել մինչև 2006 - 2007 թվականների ջեռուցման ժամանակաշրջանի ավարտը:

Առաջարկների բ) և գ) կետերի կատարման վերաբերյալ փեղեկափոխությունը ներկայացնել 2007 թվականի հունվարի 10-ին, իսկ դ) կետի կատարման վերաբերյալ՝ 2007 թվականի ապրիլի 10-ին:

**ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ**

Բնական գազի ներմուծման համակարգերի սպասարկման գործընթացի ուսումնասիրության

N	Ուսումնասիրության առարկան	Որտեղ է ուսումնասիրվելու	Կարարող	Կարարման ժամկետ		Ծանոթություն
				Սկիզբ	Ավարտ	
1	Փագասպառման ներմուծման համակարգերի սպասարկումն ապահովվելու համար անհրաժեշտ փաստաթղթերը՝ հաստատված տեխնիկական սպասարկման սրանդարտներ, հրահանգներ, հրամաններ, կարգադրություններ և այլն:	«Նայֆուսգազարդ» ՓԲԸ վարչություն	«Նայֆուսգազարդ» ՓԲԸ ՆԾԿՆ,	25.09	05.10	
2	Փագասպառման համակարգերի և սարքերի անվտանգ օգտագործման վերաբերյալ բնակիչների պարբերական հրահանգավորումը:	«Նայֆուսգազարդ» ՓԲԸ մասնաճյուղեր,	«Նայֆուսգազարդ» ՓԲԸ, ՆԾԿՆ,	05.10	01.11	
3	Փագասպառման համակարգերի սպասարկման աշխատանքների իրականացումը սպառողների մոտ (րնպրովի):	«Նայֆուսգազարդ» ՓԲԸ մասնաճյուղեր, Բաժանորդների բնակարաններում	«Նայֆուսգազարդ» ՓԲԸ ՆԾԿՆ, ՆԿ-ներ	05.10	01.11	
4	Ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ զեկուցագրի ներկայացում	ՆԾԿՆ	ՆԾԿՆ	01.11	15.11	
5	Ուսումնասիրությունների արդյունքների քննարկում և ամփոփում	ՆԾԿՆ	ՆԾԿՆ ՆԿ-ներ	15.11	01.12	

## Ծ Ր Ա Գ Ի Ր

### **Բնական գազ սպառողների ներդրային համակարգերի սպասարկման գործընթացի ուսումնասիրության**

#### **Ուսումնասիրվելու են.**

1. Գազասպառման ներդրային համակարգերի սպասարկումն ապահովվելու համար անհրաժեշտ փաստաթղթերի առկայությունը՝ տեխնիկական սպասարկման սրանդարտներ, հրահանգներ, հրամաններ, կարգադրություններ և այլն:

2. «Բնակելի տների գազասպառման կենցաղային համակարգերի տեխնիկական սպասարկման սրանդարտի» դրույթների կիրառումը: **(Ներդրային գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման համաձայնագիր: կետ 2.2 բ )**

3. Մաքակարարի ընտրությամբ և մրցույթով անցած այլ սպասարկող կազմակերպությունների առկայության դեպքում, կազմակերպության և մաքակարարի միջև կնքված պայմանագրերը: Այդ կազմակերպությունների համապատասխանությունը ՆՏ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից սահմանված չափորոշիչներին:

**(ԳՄՕԿ 2.3 կետի Է) ենթակետ), (ՆԾԿՆ 139 որոշում).**

4. Գազասպառման համակարգերի և սարքերի անվտանգ օգտագործման վերաբերյալ բնակիչների պարբերական հրահանգավորումը:

**(ԳՄՕԿ 2.3 կետի դ) ենթակետ), (Մապ պայմ 2.2 կետ ժ, ժա)**

5. Մաքակարարի կողմից գազասպառման համակարգերի սպասարկման աշխատանքների իրականացումը սպառողների մոտ (ընտրովի):

**(ԳՄՕԿ 3.6 կետ) (ներդրային գազ. համակարգի տեխ սպ համաձայնագիր)**

**Ա Մ Փ Ո Փ Ա Գ Ի Ր**

«ՆայՌուսգազարդ» ՓԲԸ-ի մասնաճյուղերում բնակչության գազասպառման ներքնային համակարգերի սպասարկման աշխատանքների ուսումնասիրության

N	ԳԳ մասնաճյուղի, փարաձքային բաժինների անվանում	Բաժանորդների քանակը	Պայմանագրերի առկայություն		Նրահանգավորված և սպասարկված բաժ. քանակը		Ծխադար ուղիների գնում		Ծանոթություն
			հին	նոր	ըստ բաժանորդի բանավոր հայտարարության	ըստ սպառողի պայմանագրում կարարված գրանցման	ըստ բաժանորդի բանավոր հայտարարության	ըստ սպառողի պայմանագրում կարարված գրանցման	
1	2	3	4	5	6	7	8	9	10
<b>1.</b>	<b>Արփաշարի ԳԳՄ</b>	<b>35</b>	<b>4</b>	<b>31</b>	<b>33</b>	<b>17</b>	<b>33</b>	<b>0</b>	
1.1	Մասիս	7	0	7	7	7	7	0	
1.2	Արփաշար	20	1	19	18	5	18	0	
1.3	գ. Մարմարաշեն	4	1	3	4	3	4	0	
1.4	գ. Նոր Կյուրի	2	0	2	2	2	2	0	
1.5	գ. Այնթափ	2	2	0	2	0	2	0	
<b>2.</b>	<b>Մարտունի ԳԳՄ</b>	<b>36</b>	<b>9</b>	<b>27</b>	<b>36</b>	<b>18</b>	<b>36</b>	<b>0</b>	
2.1	Մարտունի	6	5	1	6	1	6	0	
2.2	Վարդենիս	7	3	4	7	4	7	0	
2.3	գ. Ակունք	4	0	4	4	4	4	0	
2.4	գ. Խաչաղբյուր	4	0	4	4	4	4	0	
2.5	գ. Լուսակունք	2	0	2	2	2	2	0	
2.6	գ. Լիճք	2	0	2	2	2	2	0	
2.7	գ. Ն. Գեղաշեն	1	1	0	1	0	1	0	
2.6	գ. Վաղաշեն	5	0	5	5	1	5	0	
2.7	գ. Վարդենիկ	5	0	5	5	0	5	0	
<b>3.</b>	<b>Երևանի ԳԳՄ</b>	<b>280</b>	<b>38</b>	<b>242</b>	<b>252</b>	<b>105</b>	<b>252</b>	<b>0</b>	
3.1	Կենտրոն	37	2	35	36	12	36	0	
3.2	Զեյթուն-Ավան	32	9	23	27	13	27	0	
3.3	Աջափնյակ	35	1	34	35	19	35	0	

1	2	3	4	5	6	7	8	9	10
3.4	Էրեբունի	31	12	19	23	9	23	0	Աշխղ
3.5	Արարկիր	35	13	22	29	1	29	0	
3.6	Նոր Նորք	35	0	35	33	16	33	0	
3.7	Շահումյան	35	0	35	32	13	32	0	
3.8	Շենգավիթ	40	1	39	40	37	40	0	
<b>4.</b>	<b>Տավուշի ԳԳՄ</b>	<b>38</b>	<b>22</b>	<b>16</b>	<b>38</b>	<b>20</b>	<b>38</b>	<b>0</b>	
4.1	Դիլիջանի	15	9	6	15	10	15	0	
4.2	Իջևան	3	3	0	3	0	3	0	
4.3	գ. Գեղահովիտ	20	10	10	20	10	20	0	
<b>5.</b>	<b>Լոռի ԳԳՄ</b>	<b>42</b>	<b>25</b>	<b>17</b>	<b>40</b>	<b>14</b>	<b>40</b>	<b>0</b>	
5.1	Այվերդի	17	11	6	15	4	15	0	
5.2	Վանաձոր	10	0	10	10	10	10	0	
5.3	գ. Օձուն	14	14	0	14	0	14	0	
5.4	գ. Արդվին	1	1	0	1	0	1	0	
<b>6.</b>	<b>Սյունիքի ԳԳՄ</b>	<b>50</b>	<b>0</b>	<b>50</b>	<b>50</b>	<b>41</b>	<b>50</b>	<b>0</b>	
6.1	ք. Գորիս	25	0	25	25	16	25	0	
6.2	գ. Ակներ	10	0	10	10	10	10	0	
6.3	գ. Խոտլ	15	0	15	15	15	15	0	
	<b>ԸՆԴՀԱՄԵՆԸ</b>	<b>481</b>	<b>97</b>	<b>383</b>	<b>452</b>	<b>215</b>	<b>452</b>	<b>0</b>	
			<b>20.1%</b>	<b>79.6%</b>	<b>93.9%</b>	<b>44.7%</b>	<b>93.9%</b>	<b>0%</b>	

«Հայռուսգագարդ» ՓԲԸ-ի կողմից սպառողների ներտնային համակարգի տեխնիկական սպասարկման ծառայության մատուցման փաստացի ցուցանիշներ

առ 01.10.06 ք.

№	ԳԳՄ անվանումը	Բաժանորդների կենցաղային գազսպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայության անձնակազմի քանակը		Բաժանորդների ընդհանուր քանակը	Գազօգտագործող բաժանորդների ընդհանուր քանակը	Վերականգնված գազամատակարարման պայմանագրերի քանակը	ՀՐԳ-ի կողմից սպասարկվող բաժանորդների քանակը	ՀՐԳ-ի կողմից չսպասարկվող բաժանորդների քանակը	Փաստացի կատարված այցերի քանակը տարեկան	Բաժանորդների քանակը ում մոտ կատարվել է 1 այց	Բաժանորդների քանակը ում մոտ կատարվել է 2 այց	մինչև տարեկան սպասարկվելիք բաժանորդների կանխատեսվող քանակը	Տարվա ընթացքում սպասարկվելիք բաժանորդների կանխատեսվող քանակը	Տարեկան 1 բաժանորդին մատուցված ծառայությունների փաստացի քանակը	Տարվա ընթացքում 1 բաժանորդին մատուցվելիք ծառայությունների սահմանված քանակը	Տարվա ընթացքում 1 բաժանորդին կանխատեսվող բաժանորդական ծառայությունների քանակը
		ընդամենը	այդ թվում՝ փականագործներ													
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
1	Երևան	84	78	134392	131566	108470	129289	2277	105864	105864	0	35288	141152	0.82	2	1.1
2	Գյումրի	41	37	30159	25893	22894	25878	15	26718	25878	840	8906	35624	1.03	2	1.4
3	Շիրակ	30	24	13105	12639	12173	12639	0	16280	12639	3641	5427	21707	1.29	2	1.7
4	Լոռի	34	33	46007	43434	33520	43434	0	58533	43434	15099	19511	78044	1.35	2	1.8
5	Կոտայք	13	10	13170	11829	11829	11784	45	14666	11784	2882	4889	19555	1.24	2	1.7
6	Արմավիր	32	24	27019	27019	24610	25361	1658	25866	25361	505	8622	34488	1.02	2	1.4
7	Տավուշ	22	19	15855	15855	5921	15680	175	16048	15680	368	5349	21397	1.02	2	1.4
8	Արմավիր	24	20	16245	15784	7136	15784	0	22728	15784	6944	7576	30304	1.44	2	1.9
9	Էջմիածին	20	14	19052	19052	12980	19052	0	24496	19052	5444	8165	32661	1.29	2	1.7
10	Արարատ	19	16	10086	10057	9822	10056	1	12034	10056	1978	4011	16045	1.20	2	1.6
11	Արտաշատ	39	24	21904	21904	20700	21377	527	29800	21377	8423	9933	39733	1.39	2	1.9
12	Սյունիք	28	25	14833	14340	14118	14340	0	19994	14340	5654	6665	26659	1.39	2	1.9
13	Գավառ	12	9	11173	9962	9480	9962	0	13848	9962	3886	4616	18464	1.39	2	1.9
14	Մարտունի	63	60	17949	17471	7518	17471	0	13134	13134	0	4378	17512	0.75	2	1.0
15	Սևան	16	14	8684	7518	12152	7518	0	10248	7518	2730	3416	13664	1.36	2	1.8
16	Արագածոտն	13	9	8792	8569	8405	8405	164	10826	8405	2421	3609	14435	1.29	2	1.7
17	Վայոց Ձոր	12	12	5209	5014	5014	5014	0	6145	5014	1131	2048	8193	1.23	2	1.6
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>502</b>	<b>428</b>	<b>413634</b>	<b>397906</b>	<b>326742</b>	<b>393044</b>	4862	<b>427228</b>	<b>365282</b>	<b>61946</b>	142409	<b>569637</b>			
	<b>Միջինը</b>													1.09	2	1.4